

## Ֆինանսական վերլուծություն

Բանկի կողմից պատրաստված տարեկան ֆինանսական հաշվետվություններին կից  
ներկայացվող

2008 թվականին «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի գործունեությունը նպատակաուղղված է եղել ՀՀ-ում գործող բանկերի լավագույն տասնյակում ամրապնդմանն ու ՀՀ ֆինանսական շուկայում որպես կայուն և վստահելի կազմակերպություն հաստատվելուն:

Նախանշվածը իրագործելու նպատակով 2008 թվականի ընթացքում Բանկը ապահովել է այնպիսի արդյունքեր, ինչպիսիք են՝

- ✓ ակտիվների շարունակական աճը,
- ✓ ակտիվների բարձր որակի ապահովումը,
- ✓ վարկային պորտֆելի զգալի աճը,
- ✓ ժամկետային ավանդների կայուն բազայի ձևավորումը,
- ✓ բարձր շահութաբերության ապահովումը,
- ✓ կապիտալի աճը,
- ✓ հանրապետության տարածքում գործող մասնաճյուղային ցանցի համալրումն ու զարգացումը,
- ✓ առաջարկվող բանկային ծառայությունների որակի կատարելագործումն ու բազմազանեցումը,
- ✓ պլաստիկ քարտերով գործառնությունների շուկայում ակտիվ դերի ստանձնումը:

Այս ամենը ուղղված է եղել հաճախորդների սպասարկման որակի կատարելագործմանն ու պահանջումների բավարարմանը, ինչի մասին վկայում են Բանկի հաճախորդների քանակի պլանավորվածից գրեթե 2.5 անգամ ավելի աճը:

2008 թվականին ՀՀ բանկային համակարգում մրցակցության աճին զուգընթաց, Բանկը, հետևելով իր կողմից ընտրված առաջընթացի ռազմավարությանը և ընդլայնելով առաջարկվող ծառայությունների ցանկը, ակտիվորեն ընդգրկվել է մրցակցության մեջ, որի արդյունքում 2008 թվականին Բանկի համար շարունակվել են նախորդ տարվա զարգացման միտումները և արձանագրվել են Բանկի գործունեությունը բնութագրող ցուցանիշների բարձր աճի տեմպեր:

2008 թվականի ընթացքում, նախորդ տարվա համեմատ, Բանկի ակտիվները ավելացել են մոտ 40%-ով և կազմել են 42.191.874 հազ. դրամ, զգալիորեն աճել է Բանկի վարկային պորտֆելը՝ մոտ 60%-ով՝ կազմելով 25.325.182 հազ. դրամ, իսկ հաճախորդներից ներգրավված ավանդների պորտֆելը աճել է 28%-ով՝ կազմելով 22.094.939 հազ. դրամ:

2008 թվականին Բանկի շահույթը կազմել է 778.345 հազ. դրամ, որը նպաստել է հաշվետու ժամանակշրջանում Բանկի սեփական կապիտալի մոտ 13%-ով աճին: 2008 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի սեփական կապիտալը կազմել է 6.909.924 հազ. դրամ:

2008 թվականին միջոցների ներգրավման հիմնական աղբյուր է հանդիսացել հաճախորդներից ներգրավված միջոցները, հատկապես աճել են ֆիզիկական անձանցից ներգրավված միջոցները (նախորդ տարվա համեմատ մոտ երկու անգամ) կազմելով 10,837,392 հազ. դրամ: Հաճախորդների կողմից վստահության ապացուցույց է նաև այն, որ 2008 թվականի

դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներից ներգրավված միջոցների 60%-ից ավելին (13.830.930 հազ. դրամ) ժամկետային ավանդներ են, վերջիններս նախորդ տարվա համեմատ աճել են 56%-ով:

Բանկի կապիտալի և ներգրավված միջոցների աճը իր ազդեցությունն է ունեցել վարկավորման ծավալների ավելացման հնարավորությունների վրա. Բանկի կողմից հաճախորդներին տրամադրված վարկերի ծավալը 2008 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 25.325.182 հազ. դրամ, որի 60%-ից ավելին տնտեսության զարգացմանը նպատակաուղղված բիզնես վարկեր են:

Ընդ որում վարկավորման ծավալների աճի հետ մեկտեղ պահպանվել է նաև վարկային պորտֆելի բարձր որակը, դասակարգված վարկերի ծավալը 2008թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի ընդամենը 1.97%-ը:

IFAD («Գյուղատնտեսական զարգացման միջազգային ծրագիր») և «Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակների հետ շարունակվել են համապատասխանաբար գյուղատնտեսության զարգացմանն ուղղված վարկավորման և հիփոթեքային վարկավորման պայմանագրերը, որի շրջանակներում Բանկը շուկայում տրամադրել է համեմատաբար ցածր տոկոսադրույքներով գյուղատնտեսական և հիփոթեքային վարկեր:

2008 թվականին Բանկը վարկային համագործակցության պայմանագրեր է կնքել նաև մի շարք այլ ընկերությունների հետ, որոնցից են՝ Հայաստանի ՓՄՁ (փոքր և միջին ձեռնարկությունների) ՉԱԿ-ը և Արցախի ներդրումային հիմնադրամները:

Բանկի կողմից մատուցվող նոր ծառայությունների, մասնաճյուղային ցանցի ընդլայնման (Բանկը 2008 թվականի ընթացքում իր մասնաճյուղերի ցանցը համարել է ևս 9-ով) և շուկայում հեղինակության ամրապնդման շնորհիվ Բանկը 2008 թվականին հաճախորդների ներգրավմանն ուղղությամբ, ինչպես նշեցինք, գերազանցել է պլանավորված ցուցանիշները: Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների թվաքանակը տարվա ընթացքում ավելացել է մոտ 50%-ով, իսկ ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների թվաքանակը՝ շուրջ չորս անգամ:

2008 թվականի ընթացքում շարունակվել է քարտերի սպասարկման ենթակառուցվածքի ընդլայնման աշխատանքները, և հաշվի առնելով Բանկի ունեցած արդեն իսկ ռեալ գործող լայն ցանցը, քարտապանների ներգրավման գործընթացը զգալի ակտիվացել է, որպես արդյունք 2008 թվականի վերջում Բանկի ներգրավված քարտապանների քանակը գերազանցել է տարվա պլանը 2.5 անգամ՝ հասնելով 2010 թվականի պլանով նախատեսված քանակին (նախորդ տարվա համեմատ քարտապանների թիվը ավելացել է մոտ հինգ անգամ):

2008 թվականին Բանկը ընդլայնել է նաև հանրապետությունում իր համարժեքը չունեցող Արտարժույթի փոխանակման մեքենաների ցանցը՝ դրանց թիվը հասցնելով 33-ի:


Բանկը՝ իր արդյունավետ գործունեությունը բնութագրող ցուցանիշների աճը ապահովելուց բացի՝ բանկային համակարգում աճող մրցակցությանը դիմակայելու և կայուն դիրք գրավելու նպատակով, մեծ ուշադրություն է դարձրել նաև ռիսկերի կառավարման և ներքին հսկողության գործուն համակարգերի զարգացմանն ու կատարելագործմանը: Իսկ 2008 թվականի վերջին Բանկը ձեռնամուխ է եղել նաև ISO 9001:2008 Որակի կառավարման ստանդարտների ներդրման գործընթացին:

Խորհրդի նախագահ՝

Խորհրդի անդամ


Վարչության նախագահ՝

Գլխավոր հաշվապահ՝



Ղ. Խաչատրյան

Լ. Սողոմոն



Ա. Գիլուսյան



Ս. Խաչատրյան